ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐ

2019-2020 թվականներ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՊՏՊ գիտական գրադարանը բուհական կառուցվածքային ստորաբաժանում է, որը բուհական մյուս կառույցներից տարբերվում է իր գործառույթներով, նպատակներով և խնդիրներով:Գրադարանը բուհի կրթական միասնական գործընթացի կարևոր օղակներից է:Գրադարանի հիմնական գործառույթներն են՝ բուհի ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի և ստորաբաժանումների գրադարանային և մատենագիտական սպասարկումը, գրքային ֆոնդի համալրումը և պահպանումը, էլեկտրոնային գրադարանի պարբերական համալրումն ու էլեկտրոնային սպասարկումը:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՖՈՆԴԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

Գրադարանի ֆոնդի թվայնացումը առաջնահերթ և շարունակական գործընթաց է, որը կատարվում է գրադարանային (KOHA - online catalog) ծրագրով: Այն ներառում է ֆոնդի էլեկտրոնային քարտարանը և էլեկտրոնային գրադարանը:Գրադարանի ֆոնդի թվայնացումը կկատարվի հետևյալ հերթականությամբ՝

1. Ամբողջ ուսումնական ֆոնդի թվայնացում

2. Միօրինակ գրքերի թվայնացում,

3. Բազմօրինակ (անհրաժեշտ) գրականության թվայնացում,

4. Ամսագրերի/այլ պարբերական հրատարակությունների/թվայնացում/

5.ատենախոսությունների և մագիստրոսական թեզերի թվայնացում

1.2. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ/RFID/

Գրադարանի հիմնական ուսումնական ֆոնդի թվայնացման գործընթացին զուգահեռ պետք է իրականացվի սպասարկման բաց դարակային համակարգի ներդրում:Գործընթացը իրենից ներկայացնում է փուլային աշխատանք:

ա.որոշակի թվաքանակով / որոշվում է ելնելով `տարածքային, ուսանողների թվաքանակի և այլ ստանդարտներից/ ուսումնական գրականության տեղափոխում հատկացված համապատասխան տարածք /ընթերցասրահ կամ այլ/

բ.Գրքերի վրա RFID պիտակների տեղադրում

գ.համապատասխան գրադարակների և տեխնիկական սարքերի առկայություն

դ.տարածքային չափանիշների ապահովում

ե.Անվտանգության դարպասների առկայություն գրադարանի տարածքում

1.3 ՖՈՆԴԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Գիտական բուհական գրադարանի համար որոշիչ է համալրման նոր մեթոդների մշակումը և կիրառումը::Այն իր մեջ պետք է ներառի էլեկտրոնային գրքերի և ամսագրերի ,շտեմարանների և բազաների բաժանորդագրություն:Ֆոնդի արդիական համալրման համար անհրաժեշտ է մշակել `

ա.մասնագիտական տնտեսագիտական գրականության պիտանելիության/ժամանակային օգտագործելիության/ չափորոշիչներ:

բ.Անհրաժեշտ է մշակել ուսումնական և ուսումնամեթոդական գրականության թղթային տարբերակների օպտիմալ քանակը:

գ.մշակել ուսանողների գրքապահովվածության չափորոշիչներ/մեկ ուսանողի հաշվարկով/

դ.մշակել <Տնտեսագետ> հրատարակչության գրքերի թվայնացման կարգը

ե.էլեկտրոնային ամսագերի և բազաների բաժանորդագրություն

1.4 ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՊԱՍԱՐԱԿՈՒՄ

Գրադարանի սպասարկման որակի բարելման նպատակով ահիրաժեշտ է մշակել՝

ա.Օտարերկրյա ուսանողների ծրագրերին համապատասխան՝գրականության ձեռք բերում /էլեկտրոնային և թղթային տարբերակներով/

բ.համալսարանի մասնաճյուղերի էլեկտրոնային գրադարանային ցանցին ներգրավման տեխնիկական ապահովման գրաֆիկ

գ.էլեկտրոնային գրադարանի հեռահար հասանելիության համակարգի ապահովում

դ.թղթային ընթերցողական քարտերի էլեկտրոնային տարբերակների ձևավորում

ե. գրադարանում ձայնամեկուսիչ ընթերցողական սենյակների ձևավորում

զ.անցում ամբողջական էլեկտրոնային պատվերի ձևաչափի

է. գրադարանի տարածքում անվճար , սահմանափակ էջերով պատճենահանման հնարավորություն

ը.այլ բուհերի ուսանողների սպասարկում

1.5. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ժամանակի պահանջներից ելնելով՝ գրադարանավարը պետք է ունենա ոչ միայն մասնագիտական, այլ նաև՝ ընդհանուր բարձր գիտելիքային մակարդակ, լինի գրքի քարոզչության լավագույն ներկայացուցիչը, տիրապետի նորագույն տեխնիկական միջոցների՝ այսօրվա ուսանողին լիարժեք սպասարկելու համար: Գրադարանը նախատեսում է՝

1.Գրադարանի աշխատակիցների պարբերական վերապատրաստումների գրաֆիկի սահմանում

2.Գրադարանավարի մասնագիտական չափորոշիչների մշակում

3. Աշխատանքի ընդունելության մրցութային համակարգի ներդրում

4.Մասնագիտական սեմինարների և վեբինարների մասնակցություն

1.6. ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1.Արտերկրյան բուհական գրադարանների փորձի ուսումնասիրում և համագործակցություն

Յուրաքանչյուր գրադարանի մասնավորապես բուհական գրադարանի համար, կարևոր է համագործակցությունը տարբեր ձևաչափերով: 2019-20թթ. գրադարանը նախատեսում է զարգացնել և ընդլայնել համագործակցությունը օտարալեզու բազաներ առաջարկող գրադարանների հետ, մասնավորապես էլեկտրոնային մամուլի շտեմարաներ առաջարկող <Elibrary> գրադարանի հետ :

2.ՇԵՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Գրքային ֆոնդի ավելացմանը զուգահեռ՝ գրադարանը ունի գրքերի ապահով տեղակայման և պահպանման խնդիրներ: ՀՀ Գրադարանների մասին օրենքի , այլ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա պետք է մշակվի գրադարանային հավաքածուի պահպանման նորմեր՝ելնելով մեր գրադարանի շենքային պայմաններից: Ուստի առաջիկայում պետք է ապահովել՝

1. Գրապահոցում մետաղյա գրադարակների ամրացում և ավելացում,

2. Գրապահոցային հատվածում օդափոխության համակարգի կատարելագործում

3. Կայուն ջերմության և հակահրդեհային համագարգի ապահովում

ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ և ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Լինելով գրադարանային և բուհական համակարգի ակտիվ ստորաբաժանումներից մեկը ,որի աշխատանքը էապես ազդում է նաև ՀՊՏՀ վարկանիշի բարձրացման վրա, գրադարանն իր առջև խնդիր է դրել էապես վերափոխել սպասարկման որակը, ձևերը, ծավալները, փոխել գրադարանային հավաքածուի համալրման մեթոդները:Դրա համար անհրաժեշտ են `

1.Թվային տեխնոլոգիաների կիրառումը և էլեկտրոնային միասնական ուսանողական բազայի ներդրումը համապատասխան ծրագրով հնարավորություն կտա անցնել սպասարկման որակական նոր ձևի և բովանդակության:

2. Գրադարանի կայքում էլեկտրոնային նոր շտեմարանների և բազաների տեղադրումը,մամուլի թվային տարբերակի անցումը առաջիկա անհետաձգելի խնդիրներից մեկն է: Մյուս գրադարանների էլեկտրոնային գրացուցակներից և այլ երկրների էլեկտրոնային բաց շտեմարաններից օգտվելը կմեծացնի ՀՊՏՀ գրադարանի և յալ բուհերի ընթերցողների հնարավորությունները ավելի շատ գրքային պաշարների օգտագործման առումով:

3.Գրադարանում վճարովի ծառայությունների ներդրումը կնպաստի արտաբյուջետային գումարների ստեղման ,որոնք կապահովեն ֆոնդի ավելի ընդարձակ և ինքնուրույն ,լիարժեք համալրման:

4. հաշվի առնելով բուհում օտարերկրյա ուսանողների ուսումնառության հանգամանքը ,համալրման ժամանակ ներառել նրանց ուսումնական ծրագրերին համապատասխան գրականության համալրման հարցերը: